

Ա. ԳԱՅԴԱՐ

ԶՈՐՐՈՐԻ ԲԼԻՆԴԱԺԸ



891.715

Գ-26

ՊԱՐԹԱՐ Ա

891-715
9-26

10 NOV 2011

Ա.Բ.Կ. Գ.Ս.Գ.Ս.Բ

30 MAY 2011

ՉՈՐՐՈՐԴ ԲԼԻՆԴԱԺԸ

Թարգմ. ՅԵԼԵՆԱ ՉՍԻՍԵՅԱՆ



Ա.ԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎՅԱՆ ՅԵՐԿԻՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏՏՈՎ. ԴՈՆ

1935



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ՆՈՒՅԵՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
1984

ՓՈՒԳՐԱՀԱՍՏԱԿ ՅԵՐԵՆԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



„МОЛОДАЯ ГВАРДИЯ“ - Ի
1988 ԹՎԻ ՀՐԵՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱԳ
2007
ԳՓ

ՀԱՍՈՒ ԱՅՈՒ ՍՏՐ
ՀԱՍՈՒ ԱՅՈՒ ՍՏՐ

61-2011

Կողման յոթը տարեկան եր: Նյուրկան՝ ութը: Իսկ Վասկան՝ հազիվ վեց:

Կողման ու Վասկան հարևաններ են: Յերկու ամառա- նոցները, վորտեղ նրանք ապրում էին, կանգնած էին իրար կողքի: Նրանց բաժանում եր ցանկապատը, իսկ ցանկապատը ծակեր: Այդ ծակից տղաներն իրար մոտ հյուր էին գալիս:

Նյուրկան ապրում եր նրանց դիմաց: Սկզբում տղաները Նյուրկայի հետ ընկերություն չէին անում: Առաջին՝ վորովհետև Նյուրկան աղջիկ եր, յերկրորդ՝ վորովհետև Նյուրկայենց բակում կանգնած եր փայտե տնիկը, կատաղի շունը մեջը, և յերրորդ՝ վորովհետև նրանք յերկսով ուրախ էին:

Բայց անա ինչպես նրանք բարեկամացան:

Մեկ անգամ Մոսկվայից Վասկայի մոտ յեկավ նրա մտերիմ ընկերը — Իսայկա Գողդինը:

Իսայկան Վասկայի հասակակիցն եր և Վասկային ել նման: Միայն մի քիչ հաստ եր և մազերն ավելի սև էին, և Իսայկան ուներ հրացան, վորն արձակում եր խցաններ, իսկ Վասկան հրացան չուներ:

Իսայկան իր հոր հետ յեկավ հանգստյան որը: Յերե- խաներն սկսեցին չիլիկ խաղալ: Իսկ չիլիկ, իհարկե, յերե- քով չեն խաղում, այլ անպայման հարկավոր ե չորրորդը:

Գնացին Պավլիկ Ֆոմինին կանչելու: Բայց Պավլիկի փորը ցավում էր: Նրան չթողին չիլիկ խաղալու: Նա բուրորովին տխուր նստել էր տանը, վորովհետև քիչ առաջ բուսայուղ էր (կաստորկա) խմել:

Ինչ անել, վորտեղից ճարել չորրորդին:

Յեվ Վասկան ասաց Կոլկային.

— Իսկ ի՞նչ կլինի, յեթե կանչենք Նյուրկային:

— Կանչենք, — համաձայնեց Կոլկան: Նրա վտաններն անձ թե ինչքան յերկար են, նա այժից վատ չի վազում:

Իսայկան ել համաձայնեց:

— Բայց, — ասում է Իսայկան, — չնայած վոր իմ վտանները կարճ են, յես ել լավ եմ վազում, վորովհետև յես վազում եմ թռչկոտելով, իսկ Նյուրկան առանց թռչկոտելու:

Կանչեցին Նյուրկային:

— Նյուրկա, արի մեզ հետ չիլիկ խաղանք:

Նյուրկան սկզբում շատ զարմացավ: Բայց հետո տեսավ, վոր տղաները լուրջ են կանչում նրան:

— Յես կգայի, բայց յես պետք է նախ և առաջ վարունգը ջրեմ: Թե չե արևը կբարձրանա և տունկերը կթառամեն:

Տղաները տեսան, վոր ջրելը յերկար կտևի:

— Յեկեք մենք ել ջրենք: Մեզանից մի յերկուսը թող ջուր կրեն, մյուսները ջրեն, այսպիսով շուտով կվերջացնենք: Յեթե վոչ՝ նա մենակ մինչև կեսոք կմնա:

Այդպես ել արին: Տասն անգամ խաղացին: Վազեցին գետակը լողանալու: Հետո Իսայկան հոր հետ քաղաք գնացին:

Յեվ այդ որվանից Վասկան և Կոլկան ընկերացան Նյուրկայի հետ:

Նրանք ապրում էին Մոսկվային մոտ ավանում, հենց ծայրամասում: Նրանցից զենը տարածվում էր դաշտը՝

փոքրիկ թփերով ծածկված: Ավելի հեռու, բլուրի վրա, յերևում էր ջաղացը, յեկեղեցին և մի քանի տնակներ կարմիր կտուրներով — արդյոք կայարանն է, թե գյուղակ, — հեռվից չես ճանաչի: Մեկ անգամ Վասկան հարցրեց հորը, թե ինչպես է կոչվում այդ գյուղը:

— Դա իսկական չի, — պատասխանեց հայրը, — դա դիտամաք է արված:

— Ինչպես թե իսկական չի, — զարմացավ Վասկան: — Ինչպես թե իսկական չի, յերբ կա և՛ ջաղաց և՛ յեկեղեցի, և՛ տներ: Բոլորը յերևում է:

— Բայց և այնպես իսկական չի, — ծիծաղեց հայրը, — այստեղից յերևում է, վոր ջաղաց է և տներ... Իսկ յերբ մոտենաս, այնտեղ վոչինչ չկա:

Վասկան զարմացավ, բայց չհավատաց: Յեվ վորոշեց, վոր հայրը ծաղրեց կամ ուղղակի այնպես ասաց, վոր իրանից հեռացնի:

Նա ցանկապատի ծակից անցավ Կոլկայի մոտ: Նայում է, իսկ Կոլկան Նյուրկայի հետ նստել են ցանկապատի վրա և ինչ վոր հետաքրքրությամբ դիտում են դաշտում:


Վասկան վիրավորվեց.

— Դուք այդ ի՞նչ եք անում, ինքներդ հետաքրքիր բան եք նայում, իսկ ինձ չկանչեցիք:

Կոլկան պատասխանեց.

— Յես վաղճը ուզում եյի քո հետևիցը գալ: Բարձրացիր շուտով ցանկապատի վրա: Տես, ինչպիսի՞ կարմիր բանակայիններ հրանոթներով յեկան:

Բարձրացավ Վասկան, նայեց՝ — շատ մոտիկ, թփերում կանգնած են ձիեր, թնդանոթներ և յերկանիվանի սայլեր:



— Ահա թե ինչ, — ասաց Վասկան: — Իսկ հետո ի՞նչ է լինելու:

— Հիմա կտեսնենք, — պատասխանեց Նյուրկան. — մենք այստեղ վաղուց նստել սպասում ենք:

— Լավ, — հիշեցրեց նրանց Վասկան, — մյուս անգամ ել յես մենակ կնստեմ, ձեզ վոչինչ չեմ ասի:

Բայց և այնպես այս անգամ նրանք չխռովեցին, վորովհետև թփերում սկսվում էր ինչ վոր հետաքրքիր տեսարան:

Ամեն մեկ հրանոթն ուներ վեց ձի, — յերեք զույգ մի հրանոթին: Ձիերը հրանոթներից արձակվեցին միանգամից: Կարմիր բանակայինները վազեցին հրանոթների մոտ, ինչ վոր վորորում էյին, շուռ էյին տալիս, հետ հետ փախան: Հրանոթի մոտ մնաց միայն մեկը: Յեվ նա, վորը մնաց, ձեռքում պահեց մի յերկար թել, վորը կապված էր հրանոթին:

— Դու չգիտես, Կուրկա, ինչո՞ւ յե նա թելը բռնել, — հարցրեց Վասկան ավելի հարմար նստելով:

— Չգիտեմ, — խոստովանեց Կուրկան, — յեթե բռնել է, ուրեմն այնպես ել հարկավոր է:

— Անպայման այդպես հարկավոր է, — սնդեց Նյուրկան:

— Յեթե նա չբռնել, ապա ի՞նչ կլինել, — շարունակեց Կուրկան:

— Դե, իհարկե, — համաձայնեց Վասկան, — յեթե չբռնել, ապա ինչ կլինել...

Բայց այստեղ կարմիր բանակայինների հրամանատարը, վորը կանգնած էր հեռախոսի փողի հետևը, ինչ վոր բարձր կանչեց: Մյուս հրամանատարը, վորը կանգնած էր հրանոթին ավելի մոտիկ, նույնպես ինչ վոր կանչեց, ձեռքով նշան տվեց: Այն ժամանակ կարմիր բանակայինը քաշեց թելը:

Սկզբում փայլեց ահագին կրակը: Հետո այնպես խփեց, կարծես թե կայծակը վորոտաց հենց վառարանի ծխնե-

լույզի վերևում: Յանկապատի վրայից յերեխաները թռան կանաչի վրա:

— Համա թե վորոտաց հա, — ասաց Վասկան բարձրանալով:

— Ինչ սաստիկ վորոտաց, — համաձայնեց գունաթափված Նյուրկան:

— Յերբ վոր քաշում են, այն ժամանակ ել վորոտում ե, — բացատրեց Կոլկան: — Իսկ դուք ասում եք՝ ինչու համար ե թելը, ինչու համար ե: Յես հիմա իսկույն հասկացա, թե ինչու համար ե... Բայց ասա, Վասկա, ինչու դու ցանկապատից թռար և ինձ ել Նյուրկայի հետ հրեցիր:

— Յես չթռա, — վերավորվեց Վասկան, — առաջ Նյուրկան ցատկեց, ցնցեց ցանկապատը և յես ել ընկա:

— Յես առաջինը չեյի, — ժխտեց Նյուրկան: — Յեթե առաջինը լինեյի, ինչպես կարող եյի յես Կոլկայի մեջքին ընկնել: Կոլկան ինքն առաջինն եր:

— Այ քեզ բան, — նեղացավ Կոլկան: — Դու ուղղակի վախեցար յեղինջի մեջ ընկնել և դիտամբ արիր, վոր մեջքիս ընկնես: Իսկ յես չվախեցա և ամբողջ ձեռս ծակծկեցի: — Յեվ դառնալով Վասկային՝ նա ավելացրեց:

— Աղջիկները բոլորը վախենում են յեղինջից: Նրանք ինչ են վոր...

Այդ որվանից կարմիր բանակայինները հրանոթներով հաճախ եյին գալիս: Միայն չորեքշաբթի և յերկուշաբթի որերը չեյին կրակում, թե չե ամեն որ: Յերբ վոր հրանոթայինները գալիս եյին, յերեխաները վազում եյին ուղղակի թփերը, Նստում եյին բլրի վրա շատ մոտիկ և դիտում: Բլրից ամեն բան և՛ լսվում եր և՛ տեսնվում: Հեռախոսայինը լսում եր խողովակում և ասում հրամանատարին:

— Նշան 6 — 5, խողովակ 7 — 2:

Յեվ կարմիր բանակայիններն իսկույն վազում եյին դեպի յերկրորդ հրանոթը: Պտտցնում են ինչ վոր անիվ, և հրանոթը մի քիչ վեր ե բարձրանում: Պտտցնում են մյուսը և հրանոթի փողը մի քիչ կողքի յե դառնում: Յերբ հրանոթայիններն սկսում են նշան բռնել, հրամանատարը ձեռքով ե անում, — կարմիր բանակային նշան բռնողը քաշում ե թելը: Ահա քեզ և գրգռոց:

Թե ինչպես ե թռչում ուումբը, յերեխաներն այդ չեն տեսնում: Բայց յերբ ուումբը հասնում ե և պայթում, այն ժամանակ յերևում ե, վորովհետև ընկած տեղում բարձրանում ե փոշու և սև ծխի մի ամբողջ ամպ:

Յեվ բոլոր ուումբները պայթում եյին կամ ջաղացի մոտ, կամ յեկեղեցու մոտ, կամ անակների մոտ, վորոնք յերևում եյին հեռվում բլրի վրա:

— Բայց այդ գյուղում սարսափելի յե ապրելը, — ասաց մի անգամ Նյուրկան: Յես յերբեք այնտեղ չեյի ապրիլ: Իսկ դու Վասկա:

— Յես ել չեյի մնա, — պատասխանեց Վասկան: Բայց ինչու հայրիկս ասում եր, վոր այնտեղ վոչ մի գյուղ չկա, և բոլորը միայն մեզ թվում ե:

— Գյուղ կա, — վորոշեց Կոլկան, — բայց միայն կրակելուց առաջ բոլորն այնտեղից հեռանում են:

— Բայց ձիերը:


— Ձիերին ել տանում են:

— Կովերին ել — հարցրեց Վասկան:

— Կովերին ել, և ամեն տեսակ խողերին, վոչխարներին:

— Հավերին ել են տանում, — հետաքրքրվեց Նյուրկան: — Յեվ բագերին ել... և բոլորին:

— Յերևի բոլորին, — պատասխանեց Կոլկան և լռեց, վորովհետև իրեն ել գարմանալի թվաց այդ բոլորը:



Հենց այդ ժամանակ կրակոցը վերջացավ և կարմիր բանակայինները մոտ բերին անիվների վրա դրած կաթսան — խոհանոցը: Պոհարարն սկսեց նրանց ամանների մեջ ինչ վոր սպաս լցնել, իսկ կարմիր բանակայինները նստում էին կանաչին և ուտում:

Այդ ժամանակ Վասկան ասաց.

— Վազենք տուն, յես ել եմ ուտել ուզում:

Բայց Կոլկան կանգնեցրեց:

— Մի քիչ սպասիր, հրամանատարն այստեղ է գալիս:

Յեկավ ձիավոր հրամանատարը և բլրակի մոտ կանգնեց. ուզում էր ծխել: Հանեց ծխախոտը, հանեց լուցկին և սկսեց վառել, բայց կամ ճանճը ձիուն խայթեց, կամ թե ուղղակի նա խաղում էր, բայց ձին թափահարեց և փնչաց: Հրամանատարը քաշեց սանձը:

— Կանգնիր, — ասում է, գիժ: Ի՞նչ ես պտույտ գալիս: — Իսկ լուցկին վայր գցեց:

— Տղերք, — խնդրեց հրամանատարը, — տվեք լուցկին:

Ամենից մոտիկ կանգնած էր Վասկան: Վերցրեց տուփը, բայց սայթաքեց և ընկավ: Իսկ Կոլկան վերավորվեց, վոր Վասկան է ուզում տալ: Վազեց Վասկայի մոտ և խլեց նրանից տուփը: Վասկան ճչաց և բուռնցքով խփեց Կոլկայի գլխին: Յեվ նրանք սկսեցին կռվել: Բայց Նյուրկան այդ ժամանակ սուսիկ-փուսիկ վերցրեց լուցկին և տվեց հրամանատարին: Ահա քեզ սուսլիկ:

Միծաղեց տղաների վրա հրամանատարը, շնորհակալութուն հայտնեց և գնաց:

Վասկան և Կոլկան դադարեցրին կռվը և ուզում էին Նյուրկային ծեծել՝ թե ինչո՞ւ նա լուցկու համար առաջ ընկավ:

Բայց Նյուրկան վախեցավ և փախավ: Միթե կարելի չէ այդ յերկարավոտին հասնել:

Յե՛վ այդպիսով յերեխաները խոռովեցին:

Մյուս որը վոչ Վասկան Կոլկայի մոտ և վոչ Ել Կոլկան Վասկայի մոտ չերևացին: Նյուերկան Ել իրենց բակումն և ժամանակ անցկացնում:

Ման Ե գալիս բակում Վասկան — տխուր Ե: Վերցրեց մի փայտ, հեծավ վորպես ձիու և ման յեկավ բակի շուրջը յերեք անգամ, — միևնույն Ե, տխուր Ե:

Նայեց ծակից և տեսավ, վոր Կոլկան նետ ու աղեղով ման Ե գալիս: Գլխարկի մեջ ցցել Ե փետուրը, իբր թե հնդիկ Ե: Վիրավորվեց Վասկան: Խոթեց գլուխը ծակը և բղավեց.

— Կոլկա, տուր փետուրը. նա քոնը չե, այլ մերն Ե: Դա մեր աքլորի պոչիցն Ես պոկել:

Կոլկան ածվից մի կտոր հող վերցրեց և ուղղակի Վասկայի փորին խփեց: Թեև Վասկային այնքան Ել ցավ չպատճառեց, բայց և այնպես նա բարձր ձայնով լաց յեղավ:

Վասկայի մայրը կանգնեց դռան շեմքին և սկսեց Կոլկային հայհոյել: Վասկային Ել չխնայեց: Մյուս որը յերեխաները թշնամիներ Եյին: Յերրորդ որը — նույնպես թըշնամիներ Եյին:

Հենց այդ ժամանակ սկսվեց անկի շրջանը: Հարևան փողոցներից մյուս յերեխաները առավոտյան հավաքվում և գնում Եյին Բորկովսկի անտառը կամ Լուռ ձորերը: Մեկ Ել տեսնես, ճաշի ժամանակ բերում են — վորը կողովը, վորն ամանը լիքը: Յե՛վ անկերն Ել ինչպիսին են — սպիտակ: Իսկական շաքար Ե, վոչ թե սուճիկ:

Իսկ Վասկայի համար մենակ գնալ — տխուր Եր, և նա չեր գնում: Նյուերկայի համար ավելի ևս մենակ տխուր Եր:

Վասկան մի անգամ նստել Եր իրենց բակում և գնացք Եր խաղում: Շոգեքարը իսկականը չեր, այլ արկղից Եր

չինած, բայց հետաքրքիր Եր: Սարքել Եր հին ինքնայնով խողովակը և Ֆատֆատացնում Եր՝ դու-ու-ու... Իսկ ինքն Ել հետն որորվում Եր: Արկղները թեև չեյին գնում, բայց խփվում Եյին իրարու՝ թրախկ — թրախկ — թրախկ. Իսկ և իսկ վագոճներ:

Հանկարծ Վասկան լսեց, թե ինչ վոր բան ընկավ իր կողքը: Տեսավ — նետ Ե: Յե՛վ տեսավ, վոր Կոլկան ծակից գլուխը դուրս Ե հանել: Կոլկան ափսոսում Ե պատահաբար թռած նետին, բայց նա վախենում Ե գնալ հետևից: Վասկան նայեց և ասաց.

— Ուզում Ես, Կոլկա, յես նետը քեզ տամ:

Ի՞նչով շոգեքարչից, վերցրեց նետը և տվեց Կոլկային:

Կոլկան առավ նետը, վոչինչ չասաց և գնաց:

Ման յեկավ, ման յեկավ և հետո նորից գլուխը ծակից հանեց ու բղավեց:

— Իսկ յես, Վասկա, սուլիչ ուճեմ, ինչպես կոնդուկտորը: Ուզում Ես, յես քեզ տամ խաղալու: Բայց վոչ ընդմիշտ:

Կոլկան բերեց սուլիչը և այդպես Ել մնաց Վասկայենց բակում: Յերկար խաղացին և պայմանավորվեցին վաղն առավոտյան գնալ սուճիկ հավաքելու:

Կոլկան մոտեցավ ցանկապատին և բղավեց.

— Նյուերկա, կգնամ վաղը սուճիկ հավաքելու:

Իսկ Նյուերկան վախենում Ե:

— Դուք, — ասում Ե, — նորից կսկսեք կովել:

— Ահա թե ինչ — կովել: Ի՞նչ Ե, մենք խուլիզաններ ենք: Միայն խուլիզաններն Ես ամեն որ կովում: Մի՞թե մենք ամեն որ կովում ենք:

Այդպես Ել հաշտվեցին:

Վասկան անգրագետ Եր: Նա դեռ փոքր Եր: Կոլկան քիչ գրագետ Եր: Յերեկոյան քնելուց առաջ, նա մոտե-

ցավ որացուցին, պոկեց մի թերթիկ և կարդաց՝ «Յերեք-
շաբթի»: Նայեց մնացած թերթերին և կարդաց:

— Վաղն արդեն չորեքշաբթի յե, — մտածեց Կոլկան
և պարծեցավ:

— Իսկ յես, գիտեմ, մայրիկ, ինչու չորեքշաբթի յեն
ասում: Նրա համար, վոր շաբաթվա-մեջտեղն ե գտնվում:
Ճիշտ եմ ասում:

— Ճիշտ ե, — համաձայնեց մայրը: — Ավելի լավ ե
գնաս քնես:

«Դա յե ճիշտ ե», — մտածեց Կոլկան. — «վաղը շա-
շուտ գնում ենք սունկ հավաքելու. պետք ե ժամի վեցին
վեր կենալ»:

Յերե Կոլկան քնեց, հայրն ինչ-վոր ժողովից վերադար-
ձավ: Նայեց որացուցին և հարցրեց:

— Մի՞թե վաղը չորեքշաբթի յե:

— Վոչ, — պատասխանեց մայրը, — վաղը միայն յե-
րեքշաբթի յե: Կոլկան սխալմամբ ավելորդ մի թերթ պո-
կեց: Դրանից ել ստացվեց, վոր վաղը չորեքշաբթի յե:

Յերեի Կոլկան և Վասկան քնած մնային, յեթե Նյուր-
կան նրանց չզարթեցներ:

Արևը նոր եր բարձրացել, իսկ կանաչը դեռ խոնավ
եր, այնպես վոր առաջին անգամ բոբիկ վոտներով ման
գալը ցուրտ եր:

Մեկնեցին դեպի անտառը:

Բայց անտառում սունկ քիչ եր պատահում, և յերեխա-
ները վորոշեցին անցնել դեպի Լուռ ձորերը, վորտեղ
թփերն ավելի խիտ եյին և տեղն ել չոր:

Նյուրկայի և Կոլկայի կողովներում արդեն մի քանի
սունկ կար, իսկ Վասկայի կողովում մի հատ:

— Նյուրկա, դու իմ կողքից մի գնա, — խնդրեց նա, —
վորովհետև բոլորն ինձանից առաջ պոկում ես: Դու ավելի
լավ ե կողքի անցնես, այնտեղ ել պոկես:

— Իսկ դու աչքաթող մի արա, — պատասխանեց Նյուր-
կան, նետվելով թփերի մեջ, դուրս քաշեց այնտեղից մի
մեծ սունկ: — Ահա, տես, ինչպիսի սունկ աչքից թողիլ:

— Յես աչքից չթողի, — տխուր պատասխանեց Վաս-
կան. — յես նոր ուզում եյի թփի հետևը նայել, իսկ դու
արդեն դուրս պրծար:

Բայց շուտով, յերբ նրանք հասան Լուռ ձորերի մոտ,
այնքան շատ սունկ հանդիպեց, վոր նույն իսկ Վասկան չորս
սունկ գտավ և մեկն սպիտակ, մեծ և առանց վորդի:

Այսպես նրանք յերկար թափառում եյին թփերի մեջ,
վոր արեն արդեն բարձրացել եր ու բացատներում
գոլորշիացել ցողը, յերբ նրանք դուրս յեկան անտառի
ծայրը:


— Ապա... ապա — ասաց Կոլկան, — մի նայեք, տղերք,
վորտեղ մենք հասանք:

Բարձր թուփը վերջացավ: Հեռուն, վորքան մարդու
աչքը տեսնում եր, նրանց առաջ փովել եր բլրավետ, մանր
կանաչով ծածկված դաշտը: Յեվ այդ դաշտով չեր անցնում
վոչ մի ճանապարհ — ամենուրեք միայն թփեր եյին և
կանաչ: Այդ դաշտում ցցված եյին մի քանի բարձր փայտե
աշտարակներ: Իսկ աջ կողմը, մի կիլոմետրից վոչ հեռու,
յերեխաները տեսան հենց այն գյուղակը ջաղացով, յեկե-
ղեցիով, վոր յերևում եր նրանց ավանի ծայրից:

— Գնանք տեսնենք, — առաջարկեց Կոլկան:

— Մենք շուտով... նայենք միայն, և հետո կիջնենք
սարի տակը, և ուղիղ... ուղիղ... Այսպիսով կհասնենք մեր
սունկը:

— Իսկ յեթե հանկարծ սկսեն կրակել:



61-2010

— Այսօր չեն գա: Այսօր չորեքշաբթի յե,— հանգստացրեց նրանց Կոլկան: Գնանք տեսնենք և հետո դեպի տուն: Նրանք անցնում եյին անհարթ խոտակալած դաշտով: Յեվ քանի մտտենում եյին նրանք, այնքան հաճախ պատահում եյին նրանց դեռ չկանաչած թարմ հողի թմբեր, նեղ խորր առուններ և կյոր, անձրևային ջրով լցված փոսեր:

Կարծես թե մի հսկա խլուրդ քիչ առաջ փորում եր այդ դատարկ և լուռ դաշտում:

— Դա ուումբերից ե, — գլխի ընկավ Կոլկան: — Դիպչում ե ումբը հողին, պայթում, — ահա քեզ և փոս: Ահա և դիրքերը: Այստեղ զինվորները պահվում են գնդակներից պատերազմի ժամանակ:

— Շատ կեղտոտ ե, Կոլկա, — տարակուսանքով նայելով խոնավ կավե առուն, ասաց Նյուրկան: — Յեթե այստեղ թագնվես, ամբողջովին կկեղտոտվես:

Բայց Վասկան, վորը սևացած, կարծես այրված տերևներով թփի մոտ ինչ վոր բանով զբաղված եր, բղավեց:

— Ահա և գտա: Սա իսկական գյուղա ե:

Յեվ նա վագեց նրանց մոտ՝ ինչ վոր մի բան բռնելով ձեռքում:

Սկզբում յերեխաները կարծում եյին, թե նա սունկ ե բերում, բայց յերը նա մոտեցավ, նրանք տեսան, վոր դա սունկ չե, այլ մետաղի մի հաստ կտոր ե, սուր խորդուրդ ծայրերով:

— Սա ուումբի կտոր ե, նորից հասկացավ Կոլկան: — Դու տուր ինձ, Վասկա: Յես քեզ դրա փոխարեն յերեք սունկ կտամ... Ձեռ տուր, Նյուրկա, տես ինչպես ծանր ե:

Բայց Նյուրկան շտապ հետ քաշեց ձեռքը և կանգնեց Վասկայի հետևը:

— Ցած դիր, Կոլենկա, — վախով խնդրեց Նյուրկան: Թե չե հանկարծ նա կկրակի:



— Հիմար, — հանդատացրեց նրան Կոլկան: Նա արդեն կրակված է: Ի՞նչպես նա առանց վառողի կարող է կրակել: Տուր ինձ, Վասկա, — խնդրեց նա նորից, — իսկ յես քեզ փոխարեն յերեք սունկ կտամ: Յե՛վ նետն էլ մեխով կտամ՝ հենց վոր տուն հասնենք:

— Սունկն ի՞նչ է, — պատասխանեց Վասկան, — խնամքով պահելով ուժերի կտորը կողովում: — Սունկը կուտես և վերջ: Լավ է, յես քեզ չտամ, Կոլկա: Թող դա ինձ մոտ մնա...

Նա լռեց և հետո ավելացրեց՝

— Իսկ դու կգաս և կնայես: Յերբ վոր դու խնդրես, յես քեզ կտամ նայելու: Յես չեմ ափսոսում: Նայիր վորքան ուզում ես:

Նրանք մտտեցան գյուղակին: Վոչ յերեխաներ էյին յերևում, վոչ գյուղացիք: Խողերը չէյին խոխուում, կովերը չէյին բառաչում, շները չէյին հաջում, կարծես բոլորը մեռել էյին:

— Յես ասում էյի, վոր բոլորն այստեղից գնացել են, — կամացակ ասաց Կոլկան: — Մի՞թե այստեղ կարելի յէ ապրել. տես ինչպիսի ումբային փոսեր են:

Նրանք մի քանի քայլ էլ արին, և կանգնեցին աչքերը լայն չուած: Միայն հիմա նրանք տեսան, վոր վոչ մի գյուղակ այստեղ չկա:

Յե՛վ ջաղացը և տները և յեկեղեցին շինած էյին բարակ տախտակներից, առանց պատերի և կտուրի:

Կարծես մեկն ահռելի մկրատով կտրտել է նաշխած պատկերները և կպցրել է նրանց հենարանի վրա կանաչ դաշտում:

— Ա՛յ քեզ գյուղ, այ քեզ ջաղաց, — բղավեց Վասկան: Իսկ մենք կարծում էյինք, կարծում...

Յերեխաները ծիծաղով վաղեցին խաղալիքային գյու-

ղակը: Շուրջը բուսնել էր բարձր, խոշոր կանաչ: Լուռ էր: ազդում էյին բզեզները, թռչկոտում էյին վառ թիթեռները:

Յերեխաները վազում էյին նաշխած տնակների շուրջը՝ տնտղելով նրանց ամեն կողմից: Այստեղից վոչ այնքան հեռու հողում տնկված էյին հաստ սյուռներ, վորոնց վրա մեխված էյին ծանր հաստ տախտակներ՝ մի քանի տեղ ձեղքված և ջարդված ուժերից: Դրանք նշաններ էյին, վորոնց վրա կրակում էյին հրանոթայինները: Խաբուսիկ գյուղակի առաջ ձգված էյին յերկու շարք քարուքանդ յեղած խրամատներ, փաթաթված ժանգոտ փշոտ յերկաթալարերով:

Շուտով նրանք հանդիպեցին մի ինչ վոր մառանի: Մառանի դուռը կիսաբաց էր: Վախվելով նրանք իջան աստիճաններից և հայտնվեցին խորը, քարե նկուղում: Նկուղում կար մի աթոռ: Պատին կպցրած էր մի դարակ, իսկ դարակին ցցված էր մի փոքր մոմի կտոր:

— Վառենք մոմը, — առաջարկեց Կոլկան. — յես լուցկի ունեմ: Յես վերցրի, վոր խարույկ վառենք:

Նա հանեց լուցկին, բայց հանկարծ վերևից լսվեց ձիու դոփյուն:

— Լավ է տուն վագենք, — առաջարկեց Նյուրկան կամացուկ:

— Հիմա կվագենք: Այստեղ վերևում ինչ վոր մարդիկ կան: Հենց վոր անցնեն՝ մենք կվագենք: Թե չե մեզ կհայհոյեն: «Դուք, կասեն, ինչո՞ւ յեք այստեղ մտել»:

Դոփյունը լռեց: Յերեխաները դուրս յեկան նկուղից և տեսան, ինչպես սլանում են յերկու հեծյալներ, հեռանալու:

— Նայիր աշտարակին, — ցույց տվեց Վասկան, — տես նրա վրա... Այստեղ մեկը բարձրացավ:

Նայեցին — և իսկապես՝ աշտարակներից մեկի վրա

նստած եր մի մարդ և այդտեղից յերևում եր փոքրիկ — փոքրիկ, ինչպես ճնճղուկ:

Ուզում եյին տուն վազել, բայց Վասկան հեծկտաց, վորովհետև նկուղում մոռացել եր ոււմբի կտորը:

Նորից մտան նկուղ: Մոմը վառեցին: Հիմա աղոտ լույսի տակ կարելի յեր տեսնել հաստ խոնավ, ցեմենտե պատերը և առաստաղը, վորը ծածկված եր պինդ յերկաթե ձողերից:

Հանկարծ խուլ, հեռվում դրդոյունն ստիպեց ցնցվել յերեխաներին:

Կարծես ինչ վոր տեղ գետին ընկավ ահագին ծանր մի գերան:

— Կուլկա, — շուկով հարցրեց Նյուրկան, — դա ի՞նչ բան ե:

— Չգիտեմ, — նույնպես շուկով պատասխանեց նա:

Դրդոցը կրկնվեց, բայց հիմա թնդաց բոլորովին մոտիկ: Յերեխաները լռեցին և յերկչոտությամբ սեղմվեցին իրարու: Վասկան բացեց բերանը և պինդ սեղմելով գտած կտորը, նայում եր Կուլկային: Կուլկան յերեսը կնճռոտում եր, իսկ Նյուրկայի թշից վազեց արցունքը, և նա ասաց՝ խղճալիորեն պատրաստվելով հենց լալու:

— Կուլկա, իսկ ինձ թվում ե... ինձ կարծես թվում ե, վոր այսօր իսկի չորեքշաբթի չե...

— Ինձ ել, — տխուր ասաց Վասկան: Յեվ հանկարծ բարձր լացեց, նրան հետևեցին և մյուսները...

Դժբախտության մեջ ընկած յերեխաները յերկար լալիս եյին, թագնվելով անկյունում: Վերևում դրդոցը չեր լուում: Նա մեկ մոտենում եր, մեկ հեռանում: Լինում եյին և ընդհատման ըոպեններ: Այդպիսի ըոպեններից մեկում Կուլկան բարձրացավ վերև, վորպեսզի փակի վերևի դուռը: Բայց այստեղ բոլորովին մոտիկ այնպես խփեց, վոր Կուլ-

կան հետ գլորվեց և սողալով հասավ մինչև անկյունը, վորտեղ լուռ լալիս եյին Վասկան ու Նյուրկան, նստեց նրանց կողքին: Մի քիչ լալուց հետո, նա նորից սողաց վեր, դեպի նկուղի ծանր յերկաթով պատած դուռը, փակեց և հետ սողաց:

Դրդոցը մի անգամից կտրվեց, և միայն թեթև ցնցումից, վորն առաջանում ե տրամվայ կամ ծանր բեռնատար ավտոմոբիլ անցնելու ժամանակ, այդ ցնցումից կարելի յեր հասկանալ, վոր ոււմբերը պայթում են ինչ վոր բոլորովին մոտիկ տեղում:

— Մեզ չեն հասնի, — դեռ հեկեկալով, բայց արդեն հանգստացնելով իր ընկերներին, ասաց Կուլկան: — Մենք ահա թե ինչքան խորն ենք նստել: Յեվ պատերը քարերից են, և առաստաղը յերկաթից ե: Դու լաց մի լինի, Նյուրկա, դու ել, Վասկա: Ահա շուտով կվերջացնեն ումբակոծել, մենք դուրս կգանք և կվազենք:

— Մենք արագ կվազենք... — կուլ տալով արցունքները, ձայնակցեց Նյուրկան:

— Մենք այնպես կհետվենք, այնպես կհետվենք, վոր իսկույն տուն կհասնենք, — ավելացրեց Վասկան: — Մենք տուն կվազենք և վոչվոքի վոչինչ չենք ասի:

Մոմի կտորն այրվում եր. բոցը հալեցնում եր նրա վերջին կտորը: Պատրույզն ընկավ և մարեց: Բոլորովին մթնեց:

— Կուլկա, — հեկեկաց Նյուրկան, մթան մեջ վորոնելով նրա ձեռքը, — դու այստեղ նստի, թե չե յես շատ եմ վախենում:

— Յես ինքս ել եմ վախենում, — խոստովանեց Կուլկան և լռեց:

Յեվ նկուղում տիրեց լուռթյուն: Միայն վերևում հագիվ լսվում եին հաճախակի հարվածների խուլ ձայները,

կարծես թե մեկը հսկա մուրճով գետնի մեջ ծանր մեխեր եր մխում:

— Կուկա, Վասկա, — նորից լսվեց Նյուրկայի խղճալի ձայնը: — Դուք ինչո՞ւ յեք լուում: Առանց այն ել մուլթ ե, իսկ դուք ել լուում եք:

— Մենք չենք լուում, — պատասխանեց Կուկան: — Մենք Վասկայի հետ մտածում ենք: Դու յել նստիր և մտածիր:

— Յես իսկի չեմ մտածում, — պատասխանեց Վասկան, — յես ուղղակի այնպես նստել եմ:

Նա շուռ յեկավ, վորոնելով շոշափեց մեկի վտար և քաշեց:

— Նյուրկա, սա քո՞ վոտն ե:

— Իմն ե — դուրս քաշելով վոտը՝ բղավեց վախեցած Նյուրկան: — Ի՞նչ պատահեց:

— Թե չե, — բարկացկոտ պատասխանեց Վասկան, թե չե... դու քո վոտով ուղղակի կողովն ես բռնում և սղենկը ճխլեցիր:

Հենց վոր Վասկան սունկի մասին ասաց, և՛ Կուկան և՛ Նյուրկան և՛ ինքը Վասկան, ուրախացան:

— Յեկեք խոսենք, — առաջարկեց Կուկան, կամ յեկեք յերգենք: Դու, Նյուրկա, յերգիր, իսկ մենք Վասկայի հետ քեզ կձայնակցենք: Դու, Նյուրկա, կերգես բարակ ձայնով, իսկ յես սովորական, իսկ Վասկան ել հաստ ձայնով:

— Յես հաստ ձայնով չեմ կարող յերգել, — հրաժարվեց Վասկան: Դա Իսայկան կարող ե, իսկ յես չգիտեմ:

— Ուրեմն յերգիր սովորական ձայնով: Սկսիր, Նյուրկա:

— Ախր յես դեռ չգիտեմ, ինչ յերգեմ, — շփոթվեց Նյուրկան: Յես միայն մորս յերգը գիտեմ, վորը նա յերգում ե:

— Յերգիր մորդ յերգը...

Լսելի յեղավ, թե ինչպես Նյուրկան քիթը քաշեց: Նա ձեռքով շփեց յերեսը, չորացրեց արցունքների մնացորդը:

ները, հետո լիզեց շրթունքները և յերգեց բարակ դեռ ընդհատվող ձայնով:

Կուկ վնաց կազակը,
Տանը թողեց կնոջը,
Թողեց նա իր մանկան՝
Փոքրիկ աղջկան:

— Ապա յերգեցեք վերջին խոսքերը՝ «թողեց նա իր մանկան», — հուշեց Նյուրկան:

Յեվ յերբ Կուկան ու Վասկան յերգեցին, ապա Նյուրկան ավելի պարզահնչյուն և հանգիստ կեպով շարունակեց:

Այն ժամանակից տարիներ անցան
Անցան, գլորվեցին,
Բոլոր կազակներն իրենց
Տները վերադարձան:
Միայն մեկը չկա.
Բոլորն ել մոռացել են
Իմ փոքրիկ կազակին՝
Ախ, վաղուց սպանված:

Նյուրկան յերգում եր ավելի և ավելի պարզահնչյուն իսկ Կուկան ու Վասկան համերաշխորեն ձայնակցում եյին սովորական ձայնով: Յեվ միայն, յերբ վերևում ուժեղ դղըրդում եր, բոլոր յերեքի ձայները քիչ դողում եյին, բայց յերգն առանց կտրվելու, շարունակվում եր:

— Լավ յերգ ե, — գովեց Կուկան, յերբ նրանք վերջացրին յերգելը: — Լավ յերգ ե, բայց տխուր ե:

— Դա մորս յերգն ե, — բացատրեց Նյուրկան: — Յերբ պատերազմում հորս սպանեցին, նա միշտ այդպիսի յերգ եր յերգում:

— Միթե, Նյուրկա, հայրդ կազակ եր:

— Կազակ: Բայց նա հասարակ կազակ չեր, այլ կարմիր կազակ եր: Նրանք բոլորը սպիտակ կազակներ եյին, իսկ

հայրս կարմիր կազակ եր: Ահա դրա համար ել սպիտակ կազակները նրան սպանեցին: Յերբ յես բոլորովին փոքր եյի, մենք ապրում եյինք հեռու — Կուբանում: Հետո յերբ հորս սպանեցին, մենք այստեղ, քեռի Ֆյոդորի մոտ, գործարանս յեկանք:

— Նրան պատերազմում սպանեցին:

— Պատերազմում: Մայրս պատմում ե, վորնա մի ինչ վոր վաշտում եր: Յեվ մի անգամ պետն ասում ե հորս և մի ուրիշ կազակի՝ «Ահա ձեզ ծրար: Սլացեք Ուստ-Մեդվեդինսկի գյուղը, թող մեզ ոգնություն տան»: Սլանում են հայրս և մի կազակ: Արդեն նրանց ձիերը հոգնել եյին, իսկ Ուստ-Մեդվեդինսկի գյուղը հեռու յեր: Հանկարծ նրանց նկատեցին սպիտակ կազակները և նետվեցին նրանց հետևից: Սպիտակ կազակների ձիերը թարմ եյին, պարզ ե վոր կհասնեն: Այդ ժամանակ հայրս ասում ե կազակին՝ «Ահա քեզ, Ֆեոդոր, ծրարը, շարունակիր սլանալ, իսկ յես կամուրջի մոտ կմնամ»: Իջավ ձիուց կամուրջի մոտ, պառկեց և սկսեց կրակել սպիտակ կազակների վրա: Կրակում եր մինչև այն ժամանակ, յերբ կազակները շրջապատեցին կողքերից գետի ծանծաղուտով:

Այստեղ ել նրանք կտրատեցին հորս: Իսկ Ֆյոդորը — այն մյուս կազակը, այդ ժամանակ արդեն հեռու յեր սլացել ծրարով, այդպիսով նրան չհասան: Ահա, թե ինչպիսի կազակ եր իմ հայրը, — վերջացրեց պատմությունը Նյուրկան:

Ուժեղ դրդոյունից յերեխաները ճչացին: Յերևի քամին եր, որ բացեց վերևի դուռը, պայթոցի ձայները ներս խուժեցին նկուղը:

— Կուրկա... փակիր, — կմկմալով բղավեց Վասկան:

— Ինքդ փակիր, — պատասխանեց Կուրկան: — Յես արդեն փակել եմ:

— Կուրկա, փակիր, — բարձր լալով կրկնեց Վասկան: — Ախ դու — անսպասելի վեր կենալով բացականչեց Նյուրկան, զրգոված իր պատմությունով: — Ախ, դուք... նա դեն գցեց Վասկայի ձեռքը, անցավ վերևի դռան մոտ, փակեց և կողպեց փականով:

Դրդոցը լռեց:

Նորից լռեցին: Այսպես նստած եյին յերկար ժամանակ: Մինչև այն պահին, յերբ Կուրկան, վորն իրեն մեղավոր եր զգում փոքրիկ Վասկայի և Նյուրկայի առաջ, ասաց.

— Իսկ վերևում այլևս չեն կրակում:

Ականջ դրեցին — վերևում հանդարտ եր: Մի տասը ռոպե յել սպասեցին — նույնպես հանդարտ եր:

— Վազենք տուն, — վեր թռչելով բղավեց Կուրկան:

— Տո՛ւն, տո՛ւն — ուրախացավ Վասկան: — Վեր կաց, Նյուրկա:

— Յես վախենում եմ... հեկեկաց Նյուրկան: — Իսկ հանկարծ նորից...

— Փախչենք, փախչենք, — միաձայն բղավեցին Կուրկան և Վասկան: — Մի վախենալ մենք այնպես կվազենք...

Իուրս յեկան: Սև նկուղից հետո որը թվաց փայլուն, ինչպես ինքը — արևը:

Նայեցին շուրջը: Փայտե ծանր վահանները, վորոնք կանգնած եյին նկուղից վոչ այնքան հեռու, շարզված եյին:

Ամեն տեղ թափթված եյին փայտի կտորները և սկին եյին տալիս փոսերը դեռ չչորացած խառնված հողի վրա:

— Փախչենք, Նյուրկա: Տուր յես վերցնեմ քո կողովը, — քաջալերում եր նրան Կուրկան: — Մենք շուտով...

Յատկեցին խրամատի վրայից, անցան միջանցքով կարս-
ված փշապատերի միջից և վազեցին դարբնարան:

Հասա Վասիկան անսպասելի ճարպիկուժյամբ սլացավ
առաջ, մի ձեռքով բռնելով կողովը, մյուսով — պինդ սեղ-
մելով թանկագին ունեքի կտորը:

Կոլկան և Նյուրկան վազում էին իրար կողքի, և Կոլ-
կան ազատ աջ ձեռքով նրան ոգնում էր տանելու մեծ
անձոռնի կողովը:

Նրանք արդեն բարձրուժյունից ցած իջան և վազում
էին ցածր տունների միջով, յերբ ողբ նորից ցնցվեց,
գրգռաց և ունեքն անցնելով վերևից, պայթեց հեռու նրանց
հետևում:

Նյուրկան անսպասելի կերպով նստեց, կարծես թե նրա
վտաններին դիպավ փշուրը:

— Վազենք, Նյուրկա — բղավեց Կոլկան, զցելով իբր
կողովը և քաշելով նրա ձեռքը: — Գցիր կողովը, վազենք:

Հրետանային դիտողն աշտարակի հրապարակից մանր
թփերի մեջ նկատեց յերեք շարժվող կետեր:

«Կարծես թե, այժեր են», — մտածեց նա աչքերին մո-
տեցնելով հեռադիտակը:

Բայց, լավ դիտելուց հետո, նա սարսափեց, և վերցնե-
լով հեռախոսի փողը, բղավեց մարտկոցի կողմը, վոր ընդ-
հատեն կրակելը:

Հեռադիտակով նա պարզ տեսնում էր, ինչպես դաշտով
պանում են յերկու տղա և մի աղջիկ, մեկ յերևում, մեկ
կորչում են թփերի հետևում:

Տղաներից մեկը պինդ բռնել էր աղջկա ձեռքը: Մյուսը,
վտանները խճճելով բարձր խոտերի մեջ և սայթաքելով վա-
զում էր քիչ հետևից, պինդ սեղմելով կրծքին մի ինչ վոր

բան: Հետո նա տեսավ, վոր թփերի հետևից դուրս պրծան-
մարտկոցից ուղարկված յերկու հեծելազորայիններ, և կանգ
առնելով յերեխաների մոտ, իջան ձիերից:

Յերկու կարմիր բանակայինների ուղեկցուժյամբ, յերե-
խաները հասան մարտկոց: Հրամանատարը բարկացած էր,
վոր ստիպված էին դադարեցնել ուսումնական կրակոցը.
բայց յերբ տեսավ, վոր մեղավորները յերեք լացակամած
վախեցած փոքրիկներ են, նա այլևս չբարկացավ և կանչեց
նրանց իր մոտ:

— Ինչպե՞ս անցան նրանք շղթայված տեղով, — հարց-
րեց նա:

Յերեխաները լուռ էին: Նրանց տեղը պատասխանեց
ուղեկիցներից մեկը:

— Նրանք, ընկեր հրամանատար, յեկել էին առաջուց,
յերբ դեռ տեղը շղթայված չէր: Հետո, յերբ մեր հետախույզ-
ները զննում էին թփերը, ինչպես նրանք են ասում, նրա-
տել էին նկուղում: Յես կարծում եմ, վոր նրանք պահվել
էին չորրորդ բլինդաժում*: Նրանք ուղիղ այն կողմից
էին վազում:

— Չորրորդ բլինդաժում — կրկին հարցրեց հրամանա-
տարը: Յեվ մոտենալով Նյուրկային, շոյեց նրան: — Չորրորդ
բլինդաժում — կրկինեց նա դիմելով իր ոգնականին: — Ախր
մենք հենց այդ հողամասն էինք ումբակոծում: Խեղճ յերե-
խաներ. — նա շոյեց Նյուրկայի գգգգված գլուխը և փաղաք-
շանքով հարցրեց:

— Ասա, աղջիկ. ինչո՞ւ էիր անտեղ մտել:
— Ախր մենք գյուղակին էինք... պատասխանեց Նյուր-
կան կամացուկ:

— Մենք ուզում էինք գյուղակը տեսնել, — լավելաց-
րեց Կոլկան:

* Բլինդաժ — մարայված, վերևից ծածկված դիրք, խրամատ: (Թարգմ.)



— Մենք կարծում էյինք նա իսկական է, իսկ այնտեղ միայն տախտակներ են, — ավելացրեց Վասկան, քաջալերված հրամանատարի բարի տեսքով:

Այդ խոսքի վրա հրամանատարը և կարմիր բանակայինները ժպտացին: Հրամանատարը նայեց Վասկային, վորը մի ինչ վոր բան պահում եր հետևում:

— Այդ ի՞նչ ունես ձեռքումդ, այ տղա:

Վասկան քիթը վեր քաշեց, կարմրեց և լուռ մեկնեց հրամանատարին ուսմբի կտորը:

— Նա այդ չի վերցրել, նա այդ գտել է թփի տակ, — պաշտպանեց Վասկային Կոլկան:

— Յես սա գտա թփի տակ, — մեղավոր պատասխանեց Վասկան:

— Ախր դա քեզ ի՞նչ հարկավոր է:

Այստեղ հրամանատարը նորից ժպտաց, իսկ նրանց շրջապատող կարմիր բանակայինները բարձր ծիծաղեցին: Յեվ Վասկան, վորը բոլորովին չեր հասկանում, թե ինչ բանի վրա էլին նրանք ծիծաղում, գեմքը կնճռելով պատասխանեց:

— Ախր այդպիսի կտոր վոչ վոքի մոտ չկա, իսկ յես հիմա ունեմ:

— Դե, վագեցեք, ասաց հրամանատարը: — Այ, դուք, փորրիկներ: Նա հետ դառավ, նայեց ծոցատետրը և բզվեց արդեն բոլորովին ուրիշ ձայնով — բարձր և խիստ:

— Կրակել Յ-րդ հրանոթը. նշան 6—6, խողովակ 6—2:

Թրակի — թրակի — վորոտաց յերեխաների հետևում, յերբ թուշկոտելով, գոհ, վոր հեշտ պրծան, սլանում էյին դեպի տուն: Թրակի, թրակի....

Իսկ այդ արդեն սարսափելի չեր:

Հանգստյան օրը հոր հետ յեկավ Իսայկան: Նա հետը բերել եր հրացան, վորն արձակում եր խցաններ, և սկսեց

պարծենալ Վասիկայի առաջ հրացանով: Յեվ տարորինակ բան՝ այս անգամին Վասիկան ամենևին չեր նախանձում, վոր Իսայկան ունի հրացան, իսկ ինքը վոչ:

Մինչ Կոլկան և Նյուրկան նայում և գովում էին Իսայկայի հրացանը, Վասիկան զնաց տուն, դուրս քաշեց արկղը, վորտեղ կար կոտրած դանակը: Գնդակներ — մեկը ծակով, մեծ, մյուսն առանց ծակի, փոքրիկ մուրճիկը, յերեք մեխ, պտուտակի գլուխներ և մի քանի ուրիշ բան նրա ունեցածից: Նա հանեց այդ արկղից զգուշությամբ փաթաթված կտորը և տարավ Իսայկայի մոտ:

— Ահա թե յես ինչ ունեմ, Իսայկա, — ասաց նա մեկնելով կտորը:

Բայց Իսայկան, արդյոք անմիտ եր, թե՛ չեր ուզում ուղղակի ցույց տալ, միայն նա անտարբեր նայեց կտորին և ասաց Վասիկային:

— Դեհ, այդ ի՞նչ ե: Մեր նկուղում հին յերկաթի կտորներ, վորքան վոր ուզես:

Վասիկան նույն իսկ չխռովեց: Նա նայեց Նյուրկային, Կոլկային. նրանք խորամանկորեն ժպտացին իրարու և չորսով վապեցին գյուղի ծայրը, վորտեղ սկսվում եր զինվորական դաշտը:

Այդ ուրը հրետանայինները չեկան: Յերեխաները ցույց տվին Իսայկային, վորտեղ են կանգնում հրանոթները, բացատրեցին նրան, թե ինչու դաշտում կանգնած են փայտե աշտարակներ: Պատմեցին, ինչպիսի տարորինակ գյուղակ ե տարածված սարի վրա, վորի շուրջը խրամատներ են, և նկուղը յերկաթե առաստաղով, վոր կոչվում ե «բլինդա՛տ»:

Նրանք պատմեցին, թե ինչպես ընկան բլինդա՛տի մեջ և ինչպես նստել էին այնտեղ, մինչև ոմբակոծման վերջը:

Իսայկան հետաքրքրությամբ լսում եր, բայց յերբ նրանք վերջացրին պատմությունը, նա բավական անտարբեր ասաց.

— Ափսոս, վոր յես ել ձեզ հետ չեյի: Յես ել ձեզ հետ փնտեյի: Գնանր, պահմտուկ խաղանր:

Յեվ կրկին ժպտացին Վասիկան, Կոլկան և Նյուրկան: Հիմար, հիմար Իսայկա. նա կարծում ե, վոր բլինդա՛տ նստելն այնպես հասարակ բան ե, ինչպես պահմտուկ խաղալը: Նա վոչ մի անգամ չի լսել ոմբակոծություն: Նա չի տեսել վոչ ծուխը, վոչ ել պայթող ումբի կրակը: Նա վոչ մի անգամ ստիպված չի յեղել փակել բլինդա՛տի ծանր դուռը. ինչպես Կոլկան և Նյուրկան, նա ստիպված չի յեղել վազել ծանր կտորը ձեռքում ձագարած և փորփրված դաշտով, ինչպես Վասիկան:

Յեվ իրար նայելով Կոլկան, Վասիկան և Նյուրկան ծիծաղեցին բարի հաստ Իսայկայի վրա ուրախ և ներողատությամբ, ինչպես մեծ մարդիկ ծիծաղում են յերեխաների վրա:

Յերբ Իսայկան բարձրացրեց նրանց վրա աչքերը, զարմացած և վիրավորված այդ անհասկանալի ծիծաղով, նրանք քաշեցին նրա ձեռքից և տարան պահմտուկ խաղալու:



Отв. ред. Г. Н. Потенц. Пом. тех. ред. Д. М. Джинибалаян.
Издание 289/4549. Объем 2 печ. лист. Статформат А5—148x210. Упол-
крайлит 00-11422. Тираж 1500 экз. Заказ № 3134 Сдано в набор
19-VI 1935 г. Подписан в печать 29-VII-1935 г.

Типография им. Стачки 1902 г. Ростов на Дону

ՀՀ Ազգային գրադարան



NL0324630

Գինը
Цена 40 ԿՈՊ.
коп.

2889

На армянском языке

АРК. ГАЙДАР

ЧЕТВЕРТЫЙ БЛИНДАЖ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО
Ростов н-Д, Буденновский пр., № 30

Գ Ր Ա Պ Ս Է Ե Ս Ը
Տրստով-Դոմ, Մոսկովսկայա, № 30
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)